No _____

"-------" ---------- 2017թ. **/Կլրացվի ԾԻԳ-ի կողմից հաստատվելուց հետո/**

<u>ԱՋԳԱՅԻՆ ԳՆԱՆՇՈՒՄ</u>
<u>ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՀՐԱՎԵՐ</u>
Ապրանքների Գնում

Ծրագրի անվանումը՝ ***«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ»***

Ֆինանսավորման աղբյուրը՝ ***«Կրթության բարելավում» վարկային ծրագիր***
Պայմանագրի անվանում՝ ***«Գրասենյակային կահույքի մատակարարման» պայմանագիր***

Հարգելի _____ ,

1. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը սույնով հրավիրում է Ձեզ ներկայացնել գնառաջարկ գրասենյակային կահույքի մատակարարման համար:
2. Դուք պետք է Ձեր առաջարկը ներկայացնեք տվյալ Հրավերի բոլոր ապրանքների համար: Գնային առաջարկը կգնահատվի բոլոր ապրանքների և ծառայությունների համար միասին, և պայմանագիրը կշնորհվի այն ընկերությանը, որը կներկայացնի բոլոր ապրանքների և ծառայությունների ամենացածր գնահատված ընդհանուր արժեքը:
3. Դուք պետք է ներկայացնեք Գնառաջարկի մեկ բնօրինակ՝ լրացված ըստ կից տրված Գնառաջարկի ձևի /Հավելված 2/, որի վրա պետք է հստակ մակագրված լինի «Բնօրինակ»: Գնառաջարկը պետք է ներկայացվի կնքված և ստորագրված: Գնառաջարկները չեն ընդունվում ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով:

   Ի լրումն դրա, Դուք պետք է ներկայացնեք նշված փաստաթղթերի մեկ պատճեն, որի վրա պետք է հստակ մակագրված լինի «Պատճեն»:
   Ձեր գնառաջարկը՝ լրացված համապատասխան ձևով, պետք է ներկայացվի փակ կնքված ծրարով: Ծրարը պետք է հասցեագրվի ու ներկայացվի հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ:

4. Ձեր գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետն է՝ ***«16»* մայիսի 2017թ.,ժամը 16-00-ին /Կլրացվի ԾԻԳ-ի կողմից հաստատվելուց հետո/:**
5. Ձեր գնառաջարկը (մեկ բնօրինակ և մեկ պատճեն) պետք է ներկայացվի հայերեն լեզվով, և դրան պետք է կցվեն համապատասխան տեխնիկական փաստաթղթեր, ապրանքների նկարներ և այլ տպագիր նյութեր կամ գործին վերաբերող տեղեկություններ, Ձեր կողմից գնանշվող ապրանքների համար:

6. Ձեր գնառաջարկը պետք է ներկայացվի համաձայն բերված ցուցումների և համաձայն կից ներկայացվող Պայմանագրի: Կից ներկայացվող Մատակարարման պայմանները կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:
   I) **<u>Գին</u>**. Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով ***պայմանագրի ողջ արժեքի համար՝ վերջնական նշանավայր առաքման պայմանով,*** որը կներառի բոլոր հարկերը, ավելացված արժեքի հարկը, մաքսային ծախսերը, տեղափոխման և ապահովագրության ծախսերը, բեռնելու և բեռնաթափելու ծախսերը:

II) **<u>Գնառաջարկների գնահատում</u>**

Տեխնիկական հատկորոշիչներին համապատասխանող առաջարկները կգնահատվեն համեմատելով վերջնական կետ փոխադրման գինը համաձայն 2 կետում նշված կարգի:

Առաջարկները գնահատելու ժամանակ, Պատվիրատուն որոշում է յուրաքանչյուր առաջարկի գնահատված արժեքը՝ կատարելով ուղղումներ, եթե դրանցում տեղ են գտել թվաբանական սխալներ, և կատարում դրանց ուղղում ստորև բերվածի համաձայն ՝

(ա) գումարների թվային և բառային արտահայտությունների միջև անհամապատասխանության դեպքում հիմք կընդունվի բառային արտահայտությունը,

(բ) միավոր գնի և դրա ու քանակի արտադրյալի արդյունքում ստացված ընդհանուր գումարի միջև անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում միավոր գինը,

(գ) եթե Մատակարարը հրաժարվում է ընդունել հաշվարկներում կատարված թվաբանական սխալների ուղղումները, նրա Գնառաջարկը մերժվում է:

III) **<u>Պայմանագրի շնորհում</u>.** Գնորդը մատակարարման պատվերը կշնորհի այն հայտողին, որի Գնառաջարկը համապատասխանում է սույն Հրավերի տեխնիկական և ֆինանսական պահանջներին և որը առաջարկել է նվազագույն գնահատված գին: Հաղթող հայտողը Պայմանագիր կստորագրի համաձայն կից բերված պայմանագրի և մատակարարման պայմանների ձևի:

IV) **<u>Գնառաջարկի վավերության ժամկետ</u>.** Ձեր Գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն 40 (քառասուն) օրացուցային օրվա ընթացքում՝ հաշված կետ 4-ում նշված ներկայացման վերջնաժամկետից:

7. Հետագա տեղեկատվությունը կարող եք ստանալ հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ:

8. Ստուգումներ և աուդիտ

8.1.Մատակարարը պարտավոր է իրականացնել Գնորդի այն հանձնարարականները, որոնք համապատասխանում են նրա գտնվելու վայրում կիրառվող օրենքներին:

8.2. Մատակարարը պետք է թույլատրի, և նախատեսի, որպեսզի իր ենթակապալառուներն ու խորհրդատուները թույլատրեն Համաշխարհային Բանկին եւ / կամ Համաշխարհային Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել մատակարարի գրասենյակը Պայմանագրի կատարմանն ու հայտի ներկայացմանը վերաբերող հաշվարկները և գրառումները Համաշխարհային Բանկի կողմից նշանակված և նրա պահանջով աուդիտի ենթարկվելու համար: Մատակարարի և նրա ենթակապալառուների ու խորհրդատուների ուշադրությունը պետք է հրավիրել Պայմանագրի ձևի 5-րդ կետին՝ <<Խարդախության եւ կոռուպցիա>>, որը, մասնավորապես, ապահովում է, որ բոլոր այն գործողությունները, որոնք նպատակ ունեն նյութապես խոչընդոտել Համաշխարհային Բանկի ստուգման և աուդիտի իրավունքներին, համարվում են արգելված և կարող են հանդիսանալ պայմանագրի դադարեցման պատճառ (ինչպես նաեւ Համաշխարհային Բանկի պատժամիջոցների կիրառման ընթացակարգերի համաձայն ոչ իրավասու սահմանելու պատճառ).

9. Խնդրում ենք տեղեկացնել հեռախոսի/ֆաքսի/էլ. փոստի միջոցով սույն հրավերի ստանալու և գնառաջարկ ներկայացնելու Ձեր պատրաստակամության մասին:

Ռեկտոր՝

Հավելված 1

Ապրանքների հատկորոշիչներ

Հ/Հ	Ապրանքի			
	անունը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը
1	2	3	4	5
1	Սեղան դասախոսական	Սեղան դասախոսական 2 քաշովի դարակով: Սեղանի չափսերը՝ երկարություն 1200մմ, լայնություն 600մմ, բարձրություն 740մմ: Նյութը՝ լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Սեղանի երեսի հաստությունը 25մմ: Գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Ոտիկները պլաստիկ:	հատ	3
2	Սեղան ուսանողական	Սեղանի չափսերը երկարություն 900մմ, լայնություն 500մմ, բարձրություն 760մմ: Նյութը՝ լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Սեղանի երեսի հաստությունը 18մմ: Կարկասը մետաղական՝ բարձրության կարգավորման հնարավորությամբ: Գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ՝ փոշեներկված, լաքապատված: Ոտիկները պլաստիկ:	հատ	30
3	Սեղան համակարգչի-1	Սեղան համակարգչի: Չափսերը ՝ երկարություն 900մմ, լայնություն 500մմ, բարձրություն 760մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Սեղանի երեսը, ոտքերը եւ ոտքերը իրար միացնող միջնապատ՝ նյութը լամինատ 25մմ, եզրապատված 25մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ստեղնաշարի համար նախատեսված շարժական անվակներով դարակ՝ նյութը լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով,	հատ	2
4	Սեղան համակարգչի-2	Սեղան համակարգչի: Չափսերը՝ երկարություն 740մմ, լայնություն 700մմ, բարձրություն 740մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Սեղանի երեսը, ոտքերը եւ ոտքերը իրար միացնող միջնապատ՝ նյութը լամինատ 25մմ, եզրապատված 25մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ստեղնաշարի համար նախատեսված շարժական անվակներով դարակ՝ նյութը լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով,	հատ	7
5	Աթոռ համակարգչային	Գրասենյակային աթոռ անիվներով, երկաթյա 5 թևանի ոտքերով, նստատեղը և հենակը փափուկ սպունգով, պլաստիկ հիմքով և արմնկակալներով,երեսպատված ամուր կտորով, համալրված բարձրացնող իջնող և շարժական 24*18սմ չափսի մեխանիզմով, նստատեղի լայնությունը առնվազն 50սմ, խորությունը առնվազն 43սմ, մեջքի հատվածի լայնությունը առնվազն 48սմ:	հատ	70
6	Փափուկ պարկանման աթոռակ /пуфик/	Պաստառը՝ կտորից Լցոնած պենոպոլիստիրոլային գնդիկներով Բարձրությունը՝ 95սմ Քաշը՝ 5կգ	հատ	12
7	Գրապահարան	Գրապահարան հորիզոնական բաժանված 2 մասի՝	հատ	6

	ապակեպատ	յուրաքանչյուր մասը երկու դռներով: Չափսերը՝ երկարություն 1000մմ, լայնություն 600մմ, բարձրություն 2000մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Կարկաս՝ նյութը լամինատե 18 մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ներքին շարահարկ հենակների վրա (3 հատ)՝ նյութը լամինացված ԴՍՊ 18 մմ, մի կողմից եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Հետևի պատ՝ նյութը միակողմանի լամինացված ԴՎՊ 4մմ: Դռներ՝ 0.8 մմ հաստությամբ թափանցիկ ապակի մետաղյա բռնակով: Միացումներ փայտյա շկանտով և ձգանով, սղնիները լավորակ, ոտիկներ պլաստիկ:		
8	Չհրկիզվող պահարան	Արտաքին չափսերը՝ երկարություն 711մմ, լայնություն 581մմ, բարձրություն 1275մմ:	հատ	1
9	Շարժական պահարան	Օրգանական ապակուց՝ անիվներով, դարակաշարերով, երկու կողմից բացվող դռներով, փականով, մինչև 30 հատ դյուրակիր համակարգիչ տեղափոխելու համար	հատ	1

- **Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված**
- **Առաքումը և տեղադրումը իրականացնում է Մատակարարը ք.Երևան, Տիգրան Մեծի 17 հասցեով:**

Հավելված 2

Գնառաջարկի ձև

«___»_____2017թ.

Պատվիրատու՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Հասցե՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 17

Մենք առաջարկում ենք կատարել..... պայմանագիրը, համաձայն սույն Գնառաջարկը ուղեկցող Պայմանագրի պայմանների հետևյալ պայմանագրային գնով՝

_____ (_____) ***ՀՀ դրամ*** (ներառյալ ԱԱՀ) ***եթե կիրառելի է***
(գումարը բառերով և թվերով)

Մենք առաջարկում ենք ավարտել ապրանքների մատակարարումը

_____ օրացուցային օրում՝ Պայմանագրի ստորագրման օրվանից սկսած:
(բառերով և թվերով)
Սույն Գնառաջարկը և վերջինիս ընդունման Ձեր գրավոր ծանուցագիրը հիմք կհանդիսանան մեր միջև կնքվելիք փոխպարտավորեցնող Պայմանագրին: Մենք գիտակցում ենք, որ Դուք պարտավորված չեք ընդունել նվազագույն արժեքով Գնառաջարկը կամ ցանկացած այլ Ձեր կողմից ստացված Գնառաջարկ:

Սույնով մենք հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է Գնառաջարկի վավերականությանը՝ պահանջված առաջարկի փաստաթղթերով:

Լիազորված անձի ստորագրությունը _____ ***[կնիք]***

Ստորագրողի անունը և պաշտոնը _____

_____

Կազմակերպության անվանումը _____

Հասցեն _____

Հեռախոսահամարները _____

Ֆաքսի համարը _____

Հավելված 2.1

Առաջարկվող ապրանքների գները

1	2	3	4	5	6	7	8	9
No	Անվանումը	Քանակը /հատ/	Մեկ միավորի գինը	Ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար 3x4	Վերջնական նշանավայր տեղափոխման և ապահովագրության ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար	Պայմանագրի շնորհման դեպքում վճարվելիք վաճառքի և այլ հարկեր ներառյալ ԱԱՀ-ն/եթե կիրառելի է/ (5+6)x0,2	Ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար 5+6+7	Մատակարարման ժամկետ. /օր/
1	Սեղան դասախոսական	3						
2	Սեղան ուսանողական	30						
3	Սեղան համակարգչի-1	2						
4	Սեղան համակարգչի-2	7						
5	Աթոռ համակարգչային	70						
6	Փափուկ պարկանման աթոռակ /пуфик/	12						
7	Գրապահարան ապակեպատ	6						
8	Չհրկիզվող պահարան	1						
9	Շարժական պահարան	1						
Ընդամենը								

{**Ծանուցում** : Միավոր և ընդհանուր գների միջև անհամապատասխանության դեպքում գերակայելու է միավոր գինը}

Լիազորված անձ՝ _____

անուն, ազգանուն և ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 2.2

Առաջարկվող ապրանքների հատկորոշիչները

1	2	3	4	5
No	Անվանումը	Քանակը	Պահանջվող	Առաջարկվող
1	Սեղան դասախոսական	3	Սեղան դասախոսական 2 քաշովի դարակով: Սեղանի չափսերը՝ երկարություն 1200մմ, լայնություն 600մմ, բարձրություն 740մմ: Նյութը՝ լամինատ18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Սեղանի երեսի հաստությունը 25մմ: Գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Ոտիկները պլաստիկ:	
2	Սեղան ուսանողական	30	Սեղանի չափսերը երկարություն 900մմ, լայնություն 500մմ, բարձրություն 760մմ: Նյութը՝ լամինատ18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Սեղանի երեսի հաստությունը 18մմ: Կարկասը մետաղական՝ բարձրության կարգավորման հնարավորությամբ: Գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ՝ փոշեներկված, լաքապատված: Ոտիկները պլաստիկ:	
3	Սեղան համակարգչի-1	2	Սեղան համակարգչի: Չափսերը՝ երկարություն 900մմ, լայնություն 500մմ, բարձրություն 760մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Սեղանի երեսը, ոտքերը եւ ոտքերը իրար միացնող միջնապատ՝ նյութը լամինատ 25մմ, եզրապատված 25մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ստեղնաշարի համար նախատեսված շարժական անվակներով դարակ՝ նյութը լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով,	
4	Սեղան համակարգչի-2	7	Սեղան համակարգչի: Չափսերը՝ երկարություն 740մմ, լայնություն 700մմ, բարձրություն 740մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Սեղանի երեսը, ոտքերը եւ ոտքերը իրար միացնող միջնապատ՝ նյութը լամինատ 25մմ, եզրապատված 25մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ստեղնաշարի համար նախատեսված շարժական անվակներով դարակ՝ նյութը լամինատ 18մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով,	
5	Աթոռ համակարգչային	70	Գրասենյակային աթոռ անիվներով, երկաթյա 5 թևանի ոտքերով, նստատեղը և հենակը փափուկ սպունգով, պլաստիկ հիմքով և արմնկակալներով, երեսպատված ամուր կտորով, համալրված բարձրացնող իջնող և շարժական 24*18սմ չափսի մեխանիզմով, նստատեղի լայնությունը առնվազն 50սմ, խորությունը առնվազն 43սմ, մեջքի հատվածի լայնությունը առնվազն 48սմ:	
6	Փափուկ պարկանման աթոռակ /пуфик/	12	Պաստառը՝ կտորից Լցոնած պենոպոլիստիրոլային գնդիկներով Բարձրությունը՝ 95սմ Քաշը՝ 5կգ	
7	Գրապահարան ապակեպատ	6	Գրապահարան հորիզոնական բաժանված 2 մասի՝ յուրաքանչյուր մասը երկու դռներով: Չափսերը՝ երկարություն 1000մմ, լայնություն 600մմ, բարձրություն 2000մմ, գույնը՝ համապատասխանեցնել Պատվիրատուի հետ: Կարկաս՝ նյութը լամինատ 18 մմ, եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Ներքին շարահարկ հենակների վրա (3 հատ)՝ նյութը լամինատ 18 մմ, մի կողմից եզրապատված 18մմ նույն գույնի 0.4 մմ հաստությամբ PVC երիզաշերտով: Հետևի պատ՝ նյութը միակողմանի լամինացված ԴՎՊ 4մմ: Դռներ՝ 0.8 մմ հաստությամբ թափանցիկ ապակի մետաղյա բռնակով: Միացումներ փայտյա շկանտով և ձգանով, սղնիները լավորակ, ոտիկներ պլաստիկ:	
8	Ցիրկիզվող պահարան	1	Արտաքին չափսերը՝ երկարություն 711մմ, լայնություն 581մմ, բարձրություն 1275մմ:	
9	Շարժական պահարան	1	Օրգանական ապակուց՝ անիվներով, դարակաշարերով, երկու կողմից բացվող դռներով, փականով, մինչև 30 հատ դյուրակիր համակարգիչ տեղափոխելու համար	

Լիազորված անձ՝ _____

անուն, ազգանուն և ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 3

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ի Ձև

ք. Երևան « » _____ 2017թ.

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամը (այսուհետև՝ Գնորդ), ի դեմս ռեկտոր՝ Ռ.Միրզախանյանի, մի կողմից, և _____ _____ (այսուհետև՝ Մատակարար), ի դեմս տնօրեն _____ի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան.
Գնորդը պատվիրում է, իսկ Մատակարարը պարտավորվում է իրականացնել սույն պայմանագրի մատակարարման պայմաններով նախատեսված գրասենյակային կահույքի մատակարարումը:
Գնորդն ընդունել է Մատակարարի Գնառաջարկը Ապրանքների մատակարարման համար, որոնց ընդհանուր արժեքը կազմում է _____ՀՀ դրամ (այսուհետև՝ Պայմանագրի գին): Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ը /***եթե կիրառելի է***/:
Սույն Պայմանագրով կողմերը համաձայնվում են, որ.

1. Հետևյալ փաստաթղթերը համարվում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս.

ա) Գնորդին ներկայացված Մատակարարի Գնառաջարկը (ներառյալ գնացուցակները), որտեղ ներկայացված են մատակարարվող Ապրանքի հատկորոշիչները, նրա ցանկը և գները, մատակարարման պայմանները
բ) Պայմանագրի փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)

2. Հաշվի առնելով վճարումները, որոնք Գնորդը պետք է կատարի Մատակարարին, Մատակարարը համաձայնվում է կնքել պայմանագիրը Գնորդի հետ և պարտավորվում է իրականացնել մատակարարումը և վերացնել թերություններն ու անհամապատասխանությունները համաձայն պայմանագրի:

3. Սույնով Գնորդը պարտավորվում է վճարել Մատակարարին Պայմանագրի գինը համաձայն Մատակատարման պայմաններում սահմանված Վճարման պայմանների՝ Ապրանքը մատակարարելու, Պայմանագրային պարտավորությունները կատարելու, թերությունները և անհամապատասխանությունները վերացնելու դիմաց:

4. Պայմանագրի դադարեցում

4.1 . Պայմանագրի դադարեցում պարտավորությունները չկատարելու հետևանքով.

ա/ Անկախ Պայմանագիրը խախտելու դեպքում նախատեսված այլ փոխհատուցումներից, Գնորդը կարող է մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնել Պայմանագիրը՝ Մատակարարին գրավոր տեղեկացնելով պարտավորությունների չկատարման մասին.
1/եթե Մատակարարը Պայմանագրով սահմանված ժամկետում կամ երկարաձգված ժամկետում չի մատակարարում ապրանքները կամ դրանց մի մասը,
2/եթե Մատակարարը չի կատարում Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորություն,
3/ եթե Մատակարարը, ըստ Գնորդի, Պայմանագրի համար մրցույթին մասնակցելիս կամ այն կատարելիս դիմել է 5-րդ կետում նշված կոռուպցիայի ու խաբեության,

բ/ Գնորդի կողմից Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնելու դեպքում, Գնորդը կարող է ձեռք բերել չմատակարարված կամ չկատարված ապրանքներին կամ ծառայություններին նմանատիպ ապրանքներ կամ ծառայություններ իրեն հարմար պայմաններով և եղանակով, իսկ Մատակարարը պարտավոր է Գնորդին փոխհատուցել այդ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման համար կատարված լրացուցիչ ծախսերը: Այդուհանդերձ, Մատակարարը պարտավոր է շարունակել չդադարեցված մասով պայմանագրի կատարումը:

4.2. Անվճարունակության հետևանքով պայմանագրի դադարեցում.

ա/ Գնորդը կարող է ցանկացած պահին դադարեցնել Պայմանագիրը, այդ մասին գրավոր տեղեկացնելով Մատակարարին, եթե Մատակարարը սնանկ ճանաչվի կամ այլ պատճառով անվճարունակ դառնա: Այդ պարագայում պայմանագիրը կդադարեցվի առանց Մատակարարին փոխհատուցում վճարելու, և պայմանով, որ դադարեցումը որևէ կանխակալ վերաբերմունք կամ ազդեցություն չի ունենա Գնորդի գործելու կամ հատուցում ստանալու իրավունքի վրա:

4.3. Սեփական հայեցողությամբ պայմանագրի դադարեցում.

ա/ Գնորդը, Մատակարարին գրավոր տեղեկացնելով, կարող է ցանկացած պահի իր հայեցողությամբ ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել Պայմանագիրը: Դադարեցման մասին գրավոր ծանուցման մեջ պետք է նշված լինի, որ դադարեցումը կատարվում է Գնորդի հայեցողությամբ, պետք է նշվի, թե ինչ չափով է դադարեցվում Մատակարարի կողմից պայմանագրի կատարումը և դադարեցումն ուժի մեջ մտնելու ժամկետը:

բ/ Մատակարարի կողմից դադարեցման մասին գրավոր ծանուցումը ստանալուց 28 (քսան ութ) օրվա ընթացքում պատրաստված և մատակարարման ենթակա ապրանքները ընդունվում են Գնորդի կողմից Պայմանագրում սահմանված գներով և պայմաններով: Մնացած ապարանքների համար Գնորդը կարող է ընտրել

(1) Պայմանագրով սահմանված գներով ու պայմաններով ընդունել կատարված և մատակարարված ապրանքների ու ծառայությունների մի մասը, և/կամ

(2) հրաժարվել մնացած ապրանքներից և Մատակարարին մասամբ կատարված ապրանքների ու մատուցված ծառայությունների և Մատակարարի կողմից նախապես ձեռք բերված նյութերի ու մասերի դիմաց վճարել պայմանագրով սահմանված գինը:

5. Խարդախություն և կոռուպցիա

Եթե Գնորդը պարզի, որ մատակարարը եւ/ կամ նրա անձնակազմից որևէ մեկը, կամ նրա գործակալները, կամ նրա ենթակապալառուները, խորհրդատուները, ծառայություններ մատուցողները, մատակարարները եւ / կամ նրանց աշխատակիցները պայմանագրի շնորհման մրցույթին մասնակցելիս կամ այն կատարելիս ներգրավվել են կոռումպացված, կեղծ, խարդախ, հարկադրական կամ խոչընդոտող որևէ գործողության մեջ (ինչպես որ սահմանված է Համաշխարհային Բանկի գերակայող պատժամիջոցների ընթացակարգերով), ապա Գնորդը, Մատակարարին 14 օր առաջ տեղեկացնելով, կարող է դադարեցնել Մատակարարի Պայմանագրով նախատեսված աշխատանքը, կամ լուծել պայմանագիրը, և այդ դեպքում կկիրառվեն 4-րդ կետի 4.1. ենթակետի դրույթները

6. Ստուգումներ եւ աուդիտ

6.1 Մատակարարը պարտավոր է իրականացնել Գնորդի այն հանձնարարականները, որոնք համապատասխանում են նրա գտնվելու վայրում կիրառվող օրենքներին:

6.2 Մատակարարը պետք է թույլատրի, և նախատեսի, որպեսզի իր ենթակապալառուներն ու խորհրդատուները թույլատրեն Համաշխարհային Բանկին եւ / կամ Համաշխարհային Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել մատակարարի գրասենյակը Պայմանագրի կատարմանն ու հայտի ներկայացմանը վերաբերող հաշվարկները և գրառումները Համաշխարհային Բանկի կողմից նշանակված և նրա պահանջով աուդիտի ենթարկվելու համար: Մատակարարի և նրա ենթակապալառուների ու խորհրդատուների ուշադրությունը պետք է հրավիրել Պայմանագրի ձևի 5-րդ կետին՝ <<Խարդախության եւ կոռուպցիա>>, որը, մասնավորապես, սահմանում է, որ բոլոր այն գործողությունները, որոնք նպատակ ունեն նյութապես խոչընդոտել Համաշխարհային Բանկի ստուգման և աուդիտի իրավունքներին, համարվում են արգելված և կարող են հանդիսանալ պայմանագրի դադարեցման պատճառ (ինչպես նաեւ Համաշխարհային Բանկի պատժամիջոցների կիրառման ընթացակարգերի համաձայն ոչ իրավասու սահմանելու պատճառ):

Ի վկայություն կողմերի համաձայնության՝ կողմերը ստորագրեցին սույն Պայմանագիրը երկու հավասարազոր օրինակից վերոհիշյալ ամսաթվով:

ՄԱՏԱԿԱՐԱՐ՝	ԳՆՈՐԴ՝
	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ ք.Երևան, Տիգրան Մեծի 17 Արդշինբանկ ՓԲԸ ՆՄՀ միջոցների հ/հ 2475002612160010 ՆՄՀ համաֆինանսավորման միջոցների հ/հ 24750026112160000 ՀՎՀՀ 02527624
_____ (ստորագրություն)	ռեկտոր_____ Ռ.Միրզախանյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Մատակարարման պայմաններ

Ծրագրի անվանումը՝ **<<Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով>>**

Գնորդ՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
Ստացող. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

1. **Ապրանքների գները.**

1	2	3	4	5	6	7	8	9
No	Անվանումը	Քանա-կը	Մեկ միավորի գինը	Ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար 3x4	Վերջնական նշանավայր տեղափոխման և ապահովագրության ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար	Պայմանագրի շնորհման դեպքում վճարվելիք վաճառքի և այլ հարկեր ներառյալ ԱԱՀ-ն/եթե կիրառելի է (5+6)x0,2	Ընդհանուր գինը յուրաքանչյուր ապրանքի համար 5+6+7	Մատակարարման ժամկետ. /օր/
1	Սեղան դասախոսական	3 հատ						
2	Սեղան ուսանողական	30 հատ						
3	Սեղան համակարգչի-1	2 հատ						
4	Սեղան համակարգչի-2	7 հատ						
5	Աթոռ համակարգչային	70 հատ						
6	Փափուկ պարկանման աթոռակ /пуфик/	12 հատ						
7	Գրապահարան ապակեպատ	6 հատ						
8	Չհրկիզվող պահարան	1 հատ						
9	Շարժական պահարան	1 հատ						
Ընդամենը								

2. **Հաստատուն գին.** Գները հաստատագրված են և չեն կարող հանդիսանալ ճշտման առարկա պայմանագրի իրականացման ընթացքում:

3. **Մատակարարման ժամկետ.** Մատակարարումը պետք է իրականացվի համաձայն նշված ժամանակացույցի, բայց ոչ ուշ քան պայմանագրի կնքումից **30 օրացուցային օր**:

4. **Կիրառվող օրենք.** Պայմանագիրը պետք է մեկնաբանվի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների:

5. **<u>Վեճերի կարգավորում.</u>** Գնորդը և Մատակարարը պետք է ամեն ջանք գործադրեն հարթելու Պայմանագրիկատարման կամ Պայմանագրի հետ կապված բանակցություններին առնչվող որևէ վեճ կամ անհամաձայնություն քննարկումների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. **<u>Մատակարարում և մատակարարման փաստաթղթեր.</u>**
Մատակարարը պետք է տեղյակ պահի Գնորդին առաքման բոլոր տվյալները, ներառյալ գնման օրդերի համարը, ապրանքի նկարագրությունը, քանակը, բեռնափոխադրման միջոցը, բեռնաթափման վայրը, առաքման օրը և այլն: Մատակարարը պետք է հետևյալ փաստաթղթերը ուղարկի Գնորդին.
(i) Մատակարարի հաշիվ-ապրանքագրի երկու օրինակ՝ ներառյալ ապրանքի նկարագրությունը, քանակը, միավոր գինը և ընդհանուր արժեքը
(ii) Փաթեթավորման ցանկի օրինակը՝յուրաքանչյուր փաթեթի պարունակության նկարագրով /կիրառելի չէ/
(iii) Արտադրողի կամ մատակարարի երաշխիքի վկայականը /կիրառելի չէ/:

Թվարկված փաստաթղթերը Գնորդը պետք է ստանա առնվազն մեկ շաբաթ առաջ նախքան ապրանքի բեռնաթափումը, հակառակ դեպքում Մատակարարը պատասխանատուէ հավելյալ ծախսերի գոյացման համար:

7. **<u>Վճարում.</u>** Գնորդը կվճարի Մատակարարին Պայմանագրի 100 տոկոսը Գնորդի հետ Ապրանքը մատակարարելու վերաբերյալ ամփոփ ակտը ստանալուց հետո 30 բանկային օրվա ընթացքում:

8. **<u>Տույժ.</u>** Գույքի կամ դրա մի մասի մատակարարումն ուշացնելու դեպքում Գնորդն իրավունք ունի գանձել Մատակարարից տուգանք չմատակարարված Ապրանքների գնի 0,1 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար: Եթե ուշացման ժամկետը անցնում է 30 օրից, ապա Գնորդը կարող է առանց որևէ լրացուցիչ պարտավորությունների ստանման միակողմանի լուծել Պայմանագիրը, դրա մասին 7 օր առաջ ծանուցելով Մատակարարին:

9. **<u>Երաշխիք.</u>** Առաջարկված ապրանքները պետք է ապահովված լինեն երաշխիքով տրված արտադրողի կողմից առնվազն 12 ամսով ապրանքը Գնորդին հասցնելուց օրվանից հետո /կիրառելի չէ/:

10. **<u>Փաթեթավորում և պիտակավորում.</u>** Մատակարարը պետք է ապահովի Ապրանքների ստանդարտ փաթեթավորումն ու պիտակավորումը ինչպես պահանջվում է, ինչը զերծ կպահի Ապրանքը վնասվելուց և վատթարացումից վերջնակետ (Ստացողի գտնվելու վայր) տեղափոխելու ժամանակ:

11. **<u>Թերություններ և անհամապատասխանություններ.</u>** Մատակարարը պետք է վերացնի բոլոր թերությունները և անհամապատասխանությունները՝ այդ մասին տեղեկանալուց հետո 30 օրվա ընթացքում, սեփական միջոցների հաշվին:

12. **<u>Անհաղթահարելի ուժ.</u>** Մատակարարը չի ենթարկվի տույժի կամ այլ պատասխանատվության՝ իր պայմանագրային պարտավորությունների խախտման, չկատարման կամ անպատշաճ կատարման համար, եթե դա տեղի է ունեցել Անհաղթահարելի Ուժի ազդեցության հետևանքով:

Սույն դրույթի նպատակներով «Անհաղթահարելի ուժ» նշանակում է Մատակարարի վերահսկողությունից դուրս գտնվող երևույթներ, որոնք կապված չեն Մատակարարի սխալների և թերացումների հետ և որոնք հնարավոր չէ կանխատեսել: Նման երևույթների շարքում են դասվում՝ պատերազմներն ու հեղափոխությունները, հրդեհները, ջրհեղեղները, համաճարակները, կարանտինային սահմանափակումները և փոխադրման արգելքները (էմբարգոները):
Անհաղթահարելի ուժի առկայության դեպքում Մատակարարը պետք է անհապաղ գրավոր տեղեկացնի Գնորդին, Մատակարարը պետք է շարունակի իր պայմանագրային պարտավորությունները այնքանով, որքանով դա հնարավոր է, և պետք է փնտրի իր գործողությունների համար այլընտրանքային եղանակներ ու ճանապարհներ, որոնք արգելափակված չեն Անհաղթահահելի ուժի կողմից:

13. **<u>Պահանջվող հատկորոշիչներ.</u>**
    1. Ընդհանուր նկարագրություն
    2. Հատուկ մանրամասներ և տեխնիկական ստանդարտներ /կիրառելի չէ/:
    3. Կատարողական հատկորոշիչներ /կիրառելի չէ/:

    Մատակարարը հավաստում է, որ Ապրանքը համապատասխանում է իր Պահմանագրի հավելվածով սահմանված Ապրանքի հատկորոշիչներին:

14. **<u>Պայմանագրի չկատարում.</u>** Եթե Մատակարարը խախտում է, չի կատարում կամ անպատշաճ է կատարում Պայմանագրի պայմանները, Գնորդը կարող է առանց որևէ լրացուցիչ պարտավորությունների ստանձման միակողմանի լուծել Պայմանագիրը, դրա մասին 7 օր առաջ ծանուցելով Մատակարարին:

ՄԱՏԱԿԱՐԱՐ՝	**ԳՆՈՐԴ՝**
	Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ ք.Երևան, Տիգրան Մեծի 17 Արդշինբանկ ՓԲԸ ՆՄՀ միջոցների հ/հ 2475002612160010 ՆՄՀ համաֆինանսավորման միջոցների հ/հ 24750026112160000 ՀՎՀՀ 02527624
_____ (ստորագրություն)	ռեկտոր_____ Ռ.Միրզախանյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.